



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«ԱԿՏԻՎ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՄՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԶՈՐԻ ՊՂԻՆԶ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՏԵՂԱՍԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԴԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Սյունիքի մարզի Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասի 28.12.2012թ. ՇԱԹՎ-29/425 ընդերքօգտագործման թույլտվությունը ստացել է «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ն:

Ըստ Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) կայքի¹ Ընկերությունը 2016-2018թթ. արդյունահանում, իրացում, արտահանում չի իրականացրել: Համաձայն Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրի՝ լեռնակապիտալ աշխատանքները պետք է ավարտվեին 2012թ. հունվարի 1-ին:



Նկար 1. Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածք

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 նոյեմբերի 9-ի թիվ 147-Ա հրամանով «Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ի թույլ տված խախտումների հիմքով ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ Ընկերության նկատմամբ հարուցվել էր վարչական վարույթ, քանի որ Ընկերությունը չէր կատարել աշխատանքային նախագծով սահմանված պահանջները և ընդերքօգտագործման պայմանագրի 3.4.1 (իրականացնել աշխատանքներն օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան), 3.4.4 (ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը), 3.4.26 (կատարել ՀՀ օրենքներով սահմանված բոլոր պարտականությունները) կետերով սահմանված պարտավորությունները: 2018թ-ի հունիսի 1-ի դրությամբ Ընկերությունն ուներ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված շրջակա միջավայրի պահպանության դրամազրկի մասով 3 415.0 հազար դրամ ապառք, մշտադիտարկումների մասով՝ 1 440. 0 հազար դրամ: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018թ-ի դեկտեմբերի 28-ի 191-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճվել է, քանի որ Ընկերության կողմից վերացվել են վարչական վարույթի համար հիմք հանդիսացած խախտումները²:

Ընկերությունն առ 2021թվականի մարտի 15-ը կրում է հանքավայրի շահագործման իրավունքը³:

«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ-ին ընդերքօգտագործման ՇԱԹՎ-29/425 թույլտվությունը տրվել է 28.12.2012թ.: Այն գործում է մինչև 24.10.2036թ-ը: ՊՎ-425 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է 28.12.2012թ., որում 16.04.2015թ. կատարվել են ընդերքօգտագործման կոորդինատների փոփոխություններ: Հանքավայրի հատկացված տարածքը կազմում է 11,2 հա: Հանքաքարի արդյունահանման տարեկան թույլատրելի ծավալը սահմանված է 320,26 հազ.տ: Հանքավայրի պաշարներն են՝ հանքաքար՝ 8006.5 հազ.

¹ <https://reports.eiti.am/hy/>

² http://www.minenergy.am/storage/files/news/news_4693291134381_Hraman_191_A_1_.pdf

³ <http://www.mtad.am/hy/mtad27.12/>

տ, պղինձ՝ 13655.8տ, մոլիբդեն՝ 3819.1տ, ոսկի՝ 0,24տ, արծաթ՝ 13,29տ, ծծումբ՝ 49641,0տ, ռենիում՝ 6,89տ, սելեն՝ 5,12տ, թելուր՝ 20,58 տ:



Նկար 2., 3., 4., 5., Հին հանքարդյունաբերական ենթակառուցվածք Այգեձորի հանքավայրի տարածքում

2012թ. հուլիսի 22-ին Վարդանիձորի գյուղապետարանում տեղի են ունեցել «Ակտիվ Լեռնագործ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Այգեձորի պղինձ-մոլիբդենային բացահանքի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննական եզրակացությունը բացակայում է Շրջակա միջավայրի (ՇՄ) նախարարության կայքում: Եզրակացությունը, սակայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի հիմքով կորցրել է իր ուժը, քանի որ փորձաքննական եզրակացությունն ստանալուց հետո Ընկերությունը նախագծով նախատեսված գործունեություն չի իրականացրել:

Ազդակիր համայնքի մասին՝

Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասի ազդակիր բնակավայրն է Մեղրի խոշորացված համայնքի Վարդանիձոր բնակավայրը, որի մեջ ներառված են Թխկուտ և Այգեձոր գյուղերը: Վարդանիձորը նաև ազդակիր է Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրին, որի կենտրոնական տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ղարագույլաններ» ՓԲԸ-ին: Բնակավայրն ազդակիր է նաև Մեղրասարի ոսկու հանքավայրին, որի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Ատ-Մետալս» ՍՊԸ-ին:



Նկար 6. Գյուղ Վարդանիձոր

Ըստ Մեղրի խոշորացված համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի՝ որպես Վարդանիձոր բնակավայրի բնակչության ընդհանուր թիվ նշված է 347, որից 167 տղամարդ և 180 կին: Սյունիքի մարզպետարանի կայքում Մեղրի խոշորացված համայնքի բնակիչների թվում նշված է, որ Վարդանիձորի բնակիչների թիվը 152 է, Այգեձորի բնակիչների թիվը՝ 2, իսկ Թխկուտինը՝ 67: Ըստ Լեռվազի և Վարդանիձոր բնակավայրերի ներկայացուցչի՝ 2020թ-ի վերջի տվյալներով Վարդանիձորի բնակչության թիվը 255 է, որից 99-ը տղամարդ, 156-ը կին: Այգեձորում կա 1 տնտեսություն, իսկ Թխկուտում 8: Գործում է «Վարդանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը՝ 44 աշակերտով: Գործում է 1 մանկապարտեզ, որն ունի 12 սան:

Վարդանիձոր բնակավայրի հողերի մակերեսը կազմում է ընդամենը 9312 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5176 հա, որից՝ վարելահող՝ 125 հա, բազմամյա տնկարկ՝ 4 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 1468 հա, այլ հողատեսք՝ 3567 հա, բնակավայրերի հողեր՝ 54 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 20 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 16 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4002 հա, անտառային հողեր՝ 36 հա, որից անտառածածկ՝ 1 հա, ջրային հողեր՝ 7 հա:

Բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ, մեղվաբուծությամբ:

Բնակավայրերի խնդիրներն են՝ աղքատությունը, կախվածությունը արդյունաբերության հանքարդյունահանման ճյուղից, բնակչության արտագաղթը, օդի և ջրի, հողի աղտոտվածությունը, ժամանակակից ենթակառուցվածքների բացակայությունը, անբարեկարգ ճանապարհները և միջբնակավայրային տրանսպորտի բացակայությունը, տարածաշրջանում վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և պոչամբարի առկայությունը: Մասնավորապես՝ ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ Այգեձորի բնակիչները բողոքեցին Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրից արդյունահանված հանքաքարը տեղափոխող բեռնատարների փոշուց, որոնք, անցնելով Այգեձոր բնակավայրի միջով, փոշի են բարձրացնում և խոչընդոտում տեղի հանգստյան գոտու գործունեությանը:



Նկար 7. Լիճվազ-թեյի ոսկու հանքավայրից հանքաքար տեղափոխող բեռնատար

Նրանք նաև բողոքեցին, որ Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածքում, իրենց հանգստյան գոտու հարակից տարածքում սկսել են իրականացնել հողային աշխատանքներ, ինչի պատճառով ստիպված են լինելու լքել իրենց տունը: Հանված հողային զանգվածը լցրել են Մեղրի գետի ափին:



Նկար 8. Այգեձորի հանքավայրի տարածքից հանված հողային զանգված

Մեղրի համայնք

Մեղրի քաղաքի բնակչության ընդհանուր թիվը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 3380 մարդ (իգական՝ 2095, արական՝ 1285), նպաստառուների ընդհանուր թիվը՝ 135, որից ընտանեկան նպաստառուների թիվը՝ 77, գրանցված գործազուրկների թիվը՝ 142 հոգի:

Ունի 2 միջնակարգ դպրոց՝ նախատեսված 1351 տեղի համար, ներկայումս հաճախում է 536 աշակերտ:

Գործում է «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կենտրոնական մասնաճյուղը՝ որտեղ հաճախում է 250 սան և «Մեղրիի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ը, որտեղ հաճախում է 107 աշակերտ:

Մեղրիում գործում է մեկ միջնակարգ մասնագիտական ԲՈՒՀ՝ Մեղրու պետական քոլեջը, որն ունի 177 ուսանող: Շենքը նախատեսված է 200 ուսանողի համար:

Առողջապահական միակ հիմնարկը «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն է, ստեղծվել է 2010 թվականին «Ազարակի հիվանդանոց» ՓԲԸ և «Մեղրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների միավորման արդյունքում: Կենտրոնը մատուցում է հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապօգնության ծառայություններ:

Քաղաքում գործում են «Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ն, որն արտադրում է մուրաբա, ջեմ, օշարակ, բնական հյութ, կոմպոտ և «Մեղրու գինու գործարան» ԲԲԸ-ն, որն արտադրում է խաղողի և նոսան գինի:

Համայնքի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են պտղաբուծությունը և մեղվաբուծությունը:

Առավելապես տարածված է մերձարևադարձային պտուղների՝ նոսան, թզի, արքայանարնջի, իսկ վերջին տարիներին նաև կիվիի և ձիթապտղի մշակությունը:

Համայնքում մասամբ զբաղվում են նաև անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ:

Համայնքն ունի առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ հիմնախնդիրները՝

1. Չնայած համայնքի տարածքում հանքարդյունաբերության զարգացման մեծ ծավալներին և տնտեսական շահութաբերությանը՝ դրա զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման:
2. Համայնքում բացակայում է գյուղատնտեսական շուկան և դրա բացակայությունը բացասաբար է անդրադառնում պտղաբուծությամբ զբաղվողների արտադրանքի սպառման վրա:
3. Չկան համայնքի բնակավայրերը կենտրոնին և միմյանց կապող միկրոավտոբուսային երթուղիներ, և այս հանգամանքը սոցիալ-տնտեսական լուրջ դժվարություններ է առաջացնում բնակիչների շրջանում: Մեղրի քաղաքի շատ բնակիչներ ունեն սեփականության կամ վարձակալության իրավունք գյուղերի մեծաքանակ հողամասերի նկատմամբ: Սակայն տրանսպորտային երթուղիների բացակայությունը և տեղաշարժման դժվարությունները հնարավորություն չեն տալիս դրանց օգտագործումը:
4. Վարդանիձոր, Ալվանք, Շվանիձոր, Նոնաձոր, Լիճք գյուղերում չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ:
5. Համայնքում մարզադահլիճի բացակայությունը խոչընդոտում է մարզական կյանքի լիարժեք զարգացմանը:
6. Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհները մեծ մասամբ գտնվում են անբարեկարգ վիճակում:

«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ի իրական սեփականատերերի մասին

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ռեգիստրի⁴ կազմակերպությունը գրանցվել է 23.12.2002 թվականին: Իրական սեփականատերը 14.06.2011 թվականից 100% մասնակցության իրավունքով ՀՀ քաղաքացի Վարդան Մարգարյանն է: Ըստ ներկայացված հայտարարագրի⁵ փոխկապակցված կամ այլ սեփականատերեր Ընկերությունը չունի:

2. «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-Ի ստանձնած պարտավորություններն ըստ 28.12.12թ. ՊՎ - 425 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Սոցիալական պարտավորություններ

28.12.12թ. ՊՎ-425 ընդերքօգտագործման պայմանագրով ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններ ամրագրված չեն, ինչը հակասում է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի հոդված 54-ի 3-րդ մասի 9-րդ կետի պահանջներին:

2.1.1 28.12.12թ. ՊՎ-425 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի նկատմամբ ստանձնած սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականը

2016-2018թթ. Վարդանիձոր բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված որևէ միջոցառում «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ն չի իրականացրել:

«Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ն 2016-2018թթ. բնակավայրին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ անհատույց օտարումներ չի կատարել:

⁴ <https://www.e-register.am/am/>

⁵ <https://www.e-register.am/am/companies/1313938>

2.2. Բնապահպանական պարտավորություններ

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:

3. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:

4. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:

5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.2.2 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

- Չնայած նրան, որ կազմակերպության ընդերքօգտագործման պայմանագրի մեջ նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է, նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն, վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի, կազմակերպությունը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:
- Մշտադիտարկումների իրականացման համար սահմանված 4500000,0 դրամ վճարից 2016-2017թթ. չի վճարել, բայց 2018 թվականի համար հաշվարկային 382500 դրամը վճարել է:
- Չի փոխվել հողերի գործառնական նշանակությունը:
- Այգեձորում ԷկոԼուրին բողոքեցին, որ «Ակտիվ Լեռնագործը» հողային աշխատանքներ է իրականացնում իրենց տների մոտ, ինչի պատճառով ստիպված են լինելու լքել իրենց տունը:
- Ընկերությունը կատարել է մակաբացման աշխատանքներ և ամբողջ հանույթը լցրել Մեդրի գետի ափին:

2.3 Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ

28.12.12թ. ՊՎ-425 ընդերքօգտագործման պայմանագիրը չի ներառել հանքի փակման ծրագիրը, մինչդեռ այն պետք է ներկայացվեր օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելուն գուզահեռ /Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրք, հոդված 49, մաս 2, կետ 6/:

3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակված «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ի ֆինանսական ցուցանիշներն՝ ըստ հաշվետվությունների⁶

⁶ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/>

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Գունավոր մետաղների հանքաքար	0	0	0
Շահութահարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0
Եկամտային հարկ, դրամ	Հշվրկ. 292800 Վճր. 293400 Հշվնց. 0	Հշվրկ. 292800 Վճր. 294000 Հշվնց. 0	Հշվրկ. 276000 Վճր. 278500 Հշվնց. 0
Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Ակցիզային հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0
Ռոյալթի, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Բնօգտագործման վճար, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Բնապահպանական վճարներ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0
ՇԹ պետ.տուրք, դրամ	Հշվրկ. 1000000 0 Վճր. 1000000	Հշվրկ. 10000000 Վճր. 10000000	Հշվրկ. 10000000 Վճր. 0
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	Բազային՝ 3700000, տվյալ տարվա հշվրկ. 379880, Վճր.՝ 0	Բազային՝ 3700000, տվյալ տարվա հշվրկ. 379880, Վճր.՝ 0	Բազային՝ 3700000, տվյալ տարվա Հշվրկ.՝ 379810, Վճր.՝ 379810
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	Բազային՝ 4500000, տվյալ տարվա հշվրկ.՝ 382500, Վճր.՝ 0	Բազային՝ 4500000, տվյալ տարվա հշվրկ. 382500, Վճր.՝ 0	Բազային՝ 4500000, տվյալ տարվա հշվրկ.՝ 382500, Վճր.՝ 382500
Գույքահարկ, դրամ	ՀՀ Սյունիքի մարզ գ.Վարդանիձո ր՝ 0	ՀՀ Սյունիքի մարզ գ.Վարդանիձո ր՝ 0	ՀՀ Սյունիքի մարզ գ.Վարդանիձո ր՝ 0

Հողի հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Վարձակալություն (Հողամաս), դրամ, Մեղրիի համայնք	Վճր. 135750	Վճր. 181000	Վճր. 181400
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Սոց.-տնտ. պարտավորություն	Ըստ պայմանագրի չունի	Ըստ պայմանագրի չունի	Ըստ պայմանագրի չունի
Բարեգործական հասկացումներ	Չի կատարել	Չի կատարել	Չի կատարել
Ոչ ֆինանսական օգն.	Չի կատարել	Չի կատարել	Չի կատարել
Աշխատատեղեր	1 մարդ	1 մարդ	1 մարդ
Անհատույց օտարումներ	0	0	0

4. Ընկերության և պետական մարմինների ներկայացրած 2016, 2017, 2018թթ. տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծությունը

- 2016-2018 թվականների համար Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (ՏԿԵ) նախարարության ԱՃԹՆ հաշվետվությունների միջև տարբերություններ չկան:
- Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄ) 2016թ. հաշվետվության մեջ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի բազային չափ է նշված 11620000 դրամը, իսկ մշտադիտարկումների համար տվյալ տարվա համար հաշվարկային գումարի չափը՝ 1057500 դրամ⁷, մինչդեռ Ընկերության հաշվետվության մեջ այդ մեծությունների փոխարեն նշված են 3700000 և 382500 գումարները:
- 2017 թվականի համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և մշտադիտարկումների համար նախատեսված գումարների տարբերությունները նույնն են, ինչ որ 2016 թվականի համար, սակայն տվյալ տարվա հաշվարկային մեծությունների և վճարված գումարների միջև տարբերություններ չկան:
- 2018 թվականի համար, բացի այդ մեծությունների բազային հաշվարկի մեծությունների տարբերություններից, առկա են նաև վճարված գումարների մեծությունների տարբերություններ: Մասնավորապես, ըստ ՇՄ նախարարության հաշվետվության՝ 2018թ. Ընկերության կողմից վճարվել է համապատասխանաբար 3415000 և 1440000 դրամ⁸, ըստ Ընկերության՝ 379810 և 382500 դրամ:
- Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) 2016թ-ի հաշվետվության մեջ⁹ տարեկան վճարված պետական տուրքի չափը նշված է 10129000 դրամ, կիրառված տույժի չափը՝ 8443 դրամ, մինչդեռ Ընկերության հաշվետվության մեջ պետական տուրքը նշվում է 10000000 դրամ, իսկ տույժի մասին նշված չէ:

⁷ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=1>,

⁸ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=1>

⁹ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=3>

- ՊԵԿ-ի 2017թ-ի հաշվետվության մեջ¹⁰ տարեկան վճարված պետական տուրքի չափը նշված է 10340000, կիրառված տույժի չափը՝ 226070 դրամ, մինչդեռ Ընկերության հաշվետվության մեջ պետական տուրքը նշվում է 10000000 դրամ, իսկ կիրառված տույժի մասին նշված չէ:
- Ըստ ՊԵԿ-ի 2018թ-ի հաշվետվության¹¹ Ընկերությունն այդ տարի վճարել է 253000 եկամտահարկ, ըստ Ընկերության հաշվետվության՝ 278500 դրամ:

Այս ամինից հետևում է, որ առկա է ԱՃԹՆ հաշվետվությունների համադրելիության խնդիր:

5. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ի և ՊԵԿ-ի հաշվետվության համաձայն՝ Ընկերությունը 2016-2018 թվականներին բնապահպանական վճար չի վճարել պետական բյուջե:

Մինչ 2020 թ-ը «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ն ներառված չի եղել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում, ինչի հետևանքով Ընկերության բնապահպանական վճարներից Մեղրի համայնքը չի կարողացել օգտվել բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը¹², ըստ որի՝ այնտեղ ընդգրկվեցին բոլոր մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունները, այդ թվում նաև «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ն:

6. Համայնքային զարգացման ծրագրերում «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ի ներգրավվածության մասին

Մեղրի խոշորացված համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրում¹³ ներառված մի շարք ուղղություններից նշվում է համայնքին տնտեսական բարեկեցություն բերող, բնապահպանական նվազ ազդեցությամբ և արդյունավետ կառավարվող հանքարդյունաբերություն (պղինձ, մոլիբդեն, ոսկի, գրանոդիորիտ) ունենալու տեսլականը: Չնայած դրան՝ ծրագրում լուրջ մտահոգություններ կան տարածաշրջանում հանքարդյունաբերության ոլորտի կողմից համայնքի տարածքների աղտոտվածության վերաբերյալ: Նշվում է, որ չնայած տնտեսական շահութաբերությանը, հանքարդյունաբերության զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման: Հատկանշական է, սակայն, որ համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների շարքում «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ն ընդհանրապես չի հիշատակվում: Աշխատատեղերի ստեղծման և մասնավոր ներդրումների

¹⁰ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

¹¹ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>

¹² <https://www.arlis.am/>

¹³ <http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer>

հետ կապված ծրագրերից հիշատակված են «Լիճքվագ» ՓԲԸ-ի և «Ղարագուլյաններ» ՓԲԸ-ի գործունեությունները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով տարեկան նախատեսված է 200000-215000 դրամ գումարով միջոցառումների իրականացում:

7. «Ակտիվ Լեռնագործ» ՄՊԸ-ի կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման համար գումարների ներդրման, մշտադիտարկումների, բնապահպանական և բնօգտագործման հարկերի, պարտադիր այլ վճարների մարման մասին

Ըստ ընկերության ներկայացրած հաշվետվության՝ 2016-2018թթ. արդյունահանում չի իրականացրել Այգեձորի հանքավայրից:

2016-2018թթ. Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:

2016- 2018թթ. Մեղրի համայնքին (Վարդանիձոր) գույքահարկ չի վճարել:

2016-2018թթ. Մեղրի համայնքին (Վարդանիձոր) չի վճարել հողի հարկ:

2016թ- 2018թ. հողամասերի վարձակալության դիմաց Մեղրի համայնքին վճարել է համապատասխանաբար 135750,0, 181000,0 և 181400,0 դրամ գումար:

Փոխադրամիջոցների վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:

- 2016թ-2017թթ. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի բազային՝ 11620000 դրամից տվյալ տարեկան հաշվարկայինին՝ 379880,0 դրամ գումարը չի վճարել :
- 2018թ. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման համար հաշվարկել և վճարել է 379880,0 դրամ գումար:
- 2016թ. և 2017թ. մշտադիտարկումների իրականացման համար՝ բազային՝ 4500000 դրամից տվյալ տարիների համար հաշվարկային՝ 382500,0 -ական գումարներից ոչինչ չի վճարել:
- 2018թ. մշտադիտարկումների իրականացման համար՝ բազային՝ 4500000 դրամից տվյալ տարվա հաշվարկված 382500,0 դրամ գումարը վճարել է:
- Ռոյալթին չի վճարել ոչ մի տարի:
- Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 մլն. դրամ պետական տուրքը վճարել է 2016-2017թթ., իսկ 2018 թվականին չի վճարել:

8 . Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ- ի կողմից 2021 թվականի հունվարի 7-11-ը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում ընդերքօգտագործման իրավունքի տիրապետման, սակայն փաստացի գործունեություն չիրականացնող 5 ընդերքօգտագործող կազմակերպությունների ազդակիր բնակավայրեր այցելության ընդացքում ընդհանուր առմամբ հանդիպել և հարցազրույցներ է անցկացվել տարածաշրջանի 25 (8 կին և 17 տղամարդ), այդ թվում նաև բնակավայրերի վարչական ներկայացուցիչների և Մեղրի խոշորացված համայնքի ներկայացուցիչի հետ: Այցի ընթացքում ստացած տեղեկատվությունը հիմնականում ներառվել են Ծրագրի շրջանակներում կազմված՝ առանձին կազմակերպությունների վերաբերյալ հաշվետվություններում:

Ծրագրի շրջանակներում «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ի Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասի ազդակիր համայնքի բնակչության շրջանում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ անցկացված հարցումների նպատակն էր պարզել ԱՃԹՆ-ի ոլորտում բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ: Այդ տեղեկատվության հիմնական մասը տեղ են գտել սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև:

- ✓ Որպես համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում առկա խնդիրներ՝ հարցման մասնակից գյուղական բնակավայրերի բնակիչները նշում են աշխատատեղերի բացակայությունը, միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության բացակայությունը, ստացված գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված դժվարությունները:
- ✓ Հարցվածների գերակշիռ մասը կողմ է հանքավայրի շահագործմանը, քանի որ աղքատությանից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը համարում է դա, սակայն գտնում են, որ հանքավայրը շահագործող «Ակտիվ Լեռնագործ» ՍՊ Ընկերությունը պարտադիր պետք է ապահովի սահմանված էկոլոգիական նորմերի և պահանջների կատարումը, ինչպես նաև իր ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի նկատմամբ ստանձնի սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու պարտավորություններ:
- ✓ Շրջակա միջավայրի աղտոտման և իրենց առողջության վրա ունեցած ազդեցության կապը չեն կարողանում միանշանակ գնահատել, քանի որ չեն տիրապետում ստույգ վիճակագրական և հետազոտական տվյալների: Բոլոր դեպքերում հարցվածներին անհանգստացնում է շրջակա միջավայրի աղտոտվածությունը: Այդ մասին նշվում է նաև համայնքի զարգացման ծրագրերում:
- ✓ Բնակավայրերի վարչական ղեկավարն իրազեկված չէ Ընկերության կողմից հողի և այլ անշարժ գույքի դիմաց վճարումների գործընթացից: Նա նշեց, որ տարածքում հանքարդյունահանող Ընկերություններն իրենց գույքահարկը և հողամասերի վարձակալության գումարները վճարում են Մեղրի համայնքային բյուջե, որտեղից էլ, ըստ պահանջարկի, բաշխվում է հայտատու բնակավայրերին:
- ✓ Հարցման մասնակիցները կարծում են, որ ներկա փուլում «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ի Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրից շրջակա միջավայրի աղտոտում տեղի չի ունենում, քանի որ հանքավայրը չի շահագործվում: Անհանգստացնում են միայն Տերտերասարի՝ ներկայումս չշահագործվող ոսկու հանքավայրի հանքուղիներից և հանքաքարի վերամշակման արտադրամասից արտահոսվող ջրերը:
- ✓ Ըստ համայնքապետարանի և բնակավայրերի վարչական ղեկավարի՝ իրենք չեն մասնակցել «Ակտիվ Լեռնագործ» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման պայմանագրի կնքման գործընթացներին, առավել ևս դրա մաս հանդիսացող համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման աջակցության հարցերի ձևավորմանը, բնականաբար, չեն արտահայտել իրենց դիրքորոշումը և ըստ էության չէին տիրապետում այդ տվյալներին:
- ✓ Առողջական խնդիրներ ունենալու ժամանակ բնակիչներն օգտվում են Մեղրիի բուժսպասարկման ծառայություններից: Ավելի լուրջ առողջական խնդիրների դեպքում

օգտվում են մարզային և Երևանի առողջապահական կենտրոնների ծառայություններին:

- ✓ ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ Մեղրի խոշորացված համայնքապետարանի կազմակերպական բաժնի պետը / Վանիկ Սարգսյան / նշեց, որ, հայ-ադրբեջանական պատերազմի փորձից ելնելով, առաջնային է Մեղրի-Երևան ճանապարհի անվտանգության ապահովումը, Տաթև-Երևան ճանապարհի բարեկարգումն այնպես, որ ապահովի բեռնատար ծանրաքարշ մեքենաների երթևեկությունը: Նա նշեց նաև, որ զինադադարի պայմաններում համայնքում առաջացել են հրատապ լուծման ենթակա նոր՝ քաղաքացիական պաշտպանության թաքստոցների և ապաստարանների կառուցման, միջպետական ավտոճանապարհների որակի և անվտանգության ապահովման, Արցախից տեղահանվածների, զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներ:
- ✓ Ըստ հարցվածների՝ հայ-ադրբեջանական սահմանագատման գոտում հանքավայրեր և նրանց ենթակառուցվածքներ չկան:
- ✓ Ըստ Մեղրի համայնքի Լեիվազ-Վարդանիձոր /Այգեձոր, Թխկուտ/ բնակավայրերի վարչական ներկայացուցչի /Ռաֆիկ Մկրտչյան/ նոր պայմաններում հանքավայրերի շահագործումն իրատեսական է, եթե ներդնողը գնա ռիսկի: Ցանկալի է, որ աշխատեն, որպեսզի տնտեսությունը զարգանա, բնակիչներն էլ մնան գյուղում:
- ✓ Հարցումներից պարզ դարձավ, որ ընդհանրապես բացակայում է բնակավայրերի տարածքում գործունեություն իրականացնող հանքարդյունահանողների, այդ թվում նաև «Ակտիվ լեռնագործ» ՄՊԸ-ի համագործակցությունը ազդակիր բնակավայրերի բնակիչների հետ և որ այդ ընկերությունները նույնիսկ ոչ մասնագիտական աշխատանքներում չեն ներգրավում բնակավայրերի բնակիչներին:

Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման ոլորտում Մեղրի համայնքի և ազդակիր բնակավայրերի բնակիչներն առաջարկում են՝

1. Բնակավայրերն ապահովել խմելու մաքուր ջրով:
2. Հիմնել օրինական աղբավայրեր, բնակավայրերում տեղադրել աղբամաններ, կազմակերպել պարբերական աղբահանություն:
3. Ուժեղացնել ազդակիր բնակավայրերի տարածքներում գործունեության իրականացնող հանքարդյունահանող ընկերությունների իրատեսական հաշվետվողականության և համագործակցության մեխանիզմները:
4. Հանքավայրը շահագործել բացառապես շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ապահովման համար սահմանված նորմատիվներին և չափաքանակներին համապատասխան:
5. Քանի որ հանրային լուումներին ներկայացված բնապահպանական որևէ միջոցառում գործնականում չի կատարվում, հանքարդյունահանման ծրագրերի հաստատման գործընթացում ներկայացնել շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանն ուղղված գործուն և կատարման համար իրատեսական բնապահպանական ծրագրեր:
Բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար Մեղրի համայնքի և ազդակիր բնակավայրերի բնակիչներն առաջարկում են՝
6. Ընդերքօգտագործման պայմանագրերի կնքման ժամանակ պայմանագրի մաս հանդիսացող համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պարտավորությունների ձևավորման գործընթացին անպայման մասնակից դարձնել համայնքապետարանների ղեկավարներին և ազդակիր բնակավայրերի

- վարչական ներկայացուցիչներին, այդ բաղադրիչում ներառել ազդակիր բնակավայրերի պահանջներն ու կարիքները:
7. Ապահովել միջբնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքների կազմակերպումը:
 8. Ապահովել միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցությունը:
 9. Որպես բնակավայրերի զարգացման հեռանկարներ դիտարկել զբոսաշրջությունը, պահածոների և չոր մրգերի փոքր արտադրամասերի կազմակերպումը, փոքր գյուղատնտեսության զարգացումը:
 10. Բնակավայրերում սկսել քաղաքացիական պաշտպանության կառույցների՝ թաքստոցների, ապաստարանների, նկուղների կառուցման/վերակառուցման աշխատանքները, վարչական շենքեր, դպրոցները համալրել նոր և պիտանի անհատական պաշտպանիչ պարագաներով, ապահովել միջպետական ավտոճանապարհների որակն և անվտանգությունը, զոհվածների ընտանիքներին ցուցաբերել սոցիալական աջակցություն:

Եզրակացություն

1. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր «Ակտիվ լեռնագործ» ՍՊ Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ 2021թ. հունվար ամիսը չի իրականացրել /չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, Օրենսգրքի 4-րդ հոդվաթի 1-ին 6-րդ մաս /:
2. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների և Ընդերքօգտագործման պայմանագրի պայմանագրային կետերը:
3. 28.12.12թ. ՊՎ-425 ընդերքօգտագործման պայմանագիրը կազմվել է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի հոդված 54-ի 3-րդ մասի 9-րդ կետի և հոդված 49, մաս 2, կետ 6-ի պահանջների խախտմամբ /պայմանագիրը չի ներառել ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները և հանքի փակման ծրագիրը /:
4. Ազդակիր բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով Ընկերության ստանձնած պարտավորությունների, բնակավայրերի և համայնքի միջև չկա համագործակցություն, չի ապահովված Ընկերության կատարած աշխատանքների թափանցիկությունը:
5. Ընդերքօգտագործող ընկերությունն իր օգտագործած շարժական մեքենաների և տեխնիկայի համար սահմանվող գույքահարկի դիմաց վճարումներ չի կատարել:
6. Ընկերությունն իր Ընդերքօգտագործման պայմանագրով պարտավորությունները չի կատարել, մասնավորապես չի վճարել բնապահպանական վճարներ, որոնք, համաձայն ՀՀ օրենսդրության պետք է բաշխվեին ազդակիր համայնքների միջև՝ նրանց կողմից ներկայացվող բնապահպանական, սոցիալական, առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով:
7. Չի արդարացվել հանքարդյունահանման ծրագրում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը:
8. Չնայած նրան, որ Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրում նշված է, Ընկերությունը պարտավոր է ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած

արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը, մինչև 2018 թվականը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:

9. 2016թ. Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր բնակավայրերը զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
10. Ցածր է ազդակիր համայնքի և բնակավայրերի բնակիչների իրազեկվածությունն ԱՃԹՆ գործընթացների մասին:
11. Ընկերության ԱՃԹՆ հաշվետվությունները համադրելի չեն պետական մարմինների հաշվետվությունների հետ:
12. Ընկերությունը մակաբացման աշխատանքներ է իրականացրել առանց հողի գործառնական նշանակության փոփոխության:

Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները